ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/31611-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1126-15.07.2025-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի «օրենքի» բառից հետո առաջարկվում է լրացնել «(այսուհետ՝ Օրենք)» բառերով:

2. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում ««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-95-Ն օրենքի» բառերն առաջարկվում է փոխարինել «Օրենքի» բառով:

3. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «29.1.» թվից առաջ կիրառված չակերտն առաջարկվում է նախատեսել աղյուսակից առաջ, իսկ «28» թվից հետո կիրառված չակերտը՝ աղյուսակի վերջում, միաժամանակ չակերտից հետո առաջարկվում է լրացնել «:» կետադրական նշանը՝ պաշտոնական ինկորպորացման անհնարինությունից խուսափելու նպատակով:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ